ՀՆՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ ՔԵԹԻՈՒՄ (1970 Թ.)

1969—1970 թվականներին Լենինականից ինը կիլոմետր հյուսիս՝ Սիրակը եզերող լեռների փեշերին, Քեթի գյուղի դաշտերում, երկրագործական աշխատանքների ժամանակ հայտնաբերվեցին հնագիտական արժեքավոր նյութեր, որոնք պատճառ դարձան հետախուզական պեղումների։

1970 թ. մայիսին ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ջոկատը՝ Ռ. Թորոսյանի և Լ. Պետրոսյանի մասնակցությամբ, մանրամասն ուսումնասիրության ենթարկելով Քեթիի հանդամասերը, հայտնաբերեց նախնադարյան պատմության տարբեր փուլերին պատկանող մի շարք հետաքրքիր հուշարձաններ՝ բնակատեղիներ, կիկլոպյան ամրոցներ ու դամբարանադաշտեր։

Սրանցից առաջինը վաղ բրոնզեդարյան (մ. թ. ա. III հազ.) բնակատեղի է, որ գտնվում է գյուղից 500 մ հարավ-արևելք, «Քիրաջի (կրաքարի) սարի» ստորոտում «քյոնդալաններ» կոչվող դաշտում։ Բնակատեղիի մոտի «Քիրաջի սարի» ստորոտում կա սառնորակ մի աղբյուր։ Բնակատեղին բնորոշվում է դետնի մակերեսին սփռված բազմազան հնագիտական նյութերով՝ սև փայլեցված խեցեղենի բեկորներով, աղորիքներով, սանդերով և սանդակոթերով, ինչպես նաև վարելահողերի միջանկյալ տեղամասերում պահպանված կառույցների հետքերով։ Վաղ բրոնզեդարյան մշակույթի հնագիտական այս համալիրն ամրոցջանում է դամբարանադաշտով, որը գտնվում է բնակատեղիից շուրջ 100 մ հարավ-արևմուտք։

Գյուղից մոտ 2 կմ հյուսիս-արևմուտք՝ շրջակայքի հարթության նկատմամբ գերիշխող դիրք ունեցող բարձունքի վրա, ժամանակին կառուցված է եղել մի հզոր կիկլոպյան ամրոց, որին տեղացիները «սղնախներ» են անվանում։ Այն զբաղեցնում է երկու հեկտարից ավելի տարածություն և բաղկացած է երկու մասից՝ վերին և ներքին ամրոցներից։ Վերին ամրոցի պարիսպները շարված են բնական անմշակ որձաքարերով, որոնց պահպանված մնացորդները այժմ դետնի մակերևսին երևում են 50—80 սմ բարձրությամբ։ Մուտքը գտնվում է հյուսիս-արևմտյան կողմում։ Այստեղ այսօր էլ նկատվում են դեպի ամրոցը տանող ճանապարհի հետքերը։ Ներսում դետնի մակերեսին նշմարվում են բառակուսի կացարանների մնացորդներ։

Վերին ամրոցից 100 մ ներքև, արևելյան կողմում, մեկ այլ բարձրության վրա տեղավորված է ներքին ամրոցը, որն իր չափերով մի քանի անգամ փոքր է վերինից։ Սա առանձին կառուցվածք է, իր պարիսպներով և մի քանի բառակուսի կացարաններով։ Ներքին ամրոցը մտել է ամրությունների ընդհանուր պաշտպանական համակարգի մեջ, քանի որ նկատվում են երկու ամրոցները իրար հետ կապող պարիսպների հետքերը։ Ամրոցների ներքևից և լեռան լանջերից հավաքվել են սև փայլեցված և փայլեցման եղանակով զարդարված կավամանների բեկորներ և աղորիքներ։ Հին մշակութային այս համալիրն ամրողջանում է կիկլոպյան ամրոցից 100 մ հարավ, ձորի աջ կողմում տարածված դամբարանադաշտով։

Մյուս հուշարձանը գտնվում է գյուղից հարավ-արևելք, խոր ձորի ձախ ափին, «մոլլի հանդ» կոչվող վայրում, որին տեղացիները նաև «խարարա» են անվանում։ Ինչպես ցույց են տալիս դետնի մակերեսից հավաքված նյութերը, բնակատեղին գոյություն է ունեցել մ. թ. ա. IV—I դարերում։

Մեկ այլ հնավայր գտնվում է գյուղի հյուսիս-արևմտյան կողմում, 1 կմ հեռավորության վրա, լեռան ստորոտին, «քարոտ հողեր» կոչվող հանդամասում և պատկանում է միջին դարերին։

Հնարավորություն չունենալով մանրամասն ուսումնասիրել Քեթիի շրջակայքում գտնվող նախնադարյան բնակատեղիները և ամրոցները, նպատակահարմար գտանք պեղել միայն մի քանի դամբարաններ, որոնք պետք է օգնեին Քեթիի հնագիտական համալիրի նախնական բնութագրմանը։

Վերը նշված, մ. թ. ա. III հազարամյակին պատկանող բնակատեղիի դամբարանադաշտում պեղվեցին և ուսումնասիրվեցին երկու դամբարաններ։ Նրանցից առաջինը քարարկղ է, որի պատերը շարված են տարբեր չափերի անմշակ քարերով։ Դամբարանը ծածկված է երկու մեծ (2,4×0,6 մ և 2,3×0,5 մ) և մեկ համեմատաբար փոքր սալ քարերով, ունի 1,1 մ խորություն, 1,2 մ լայնություն և 1,85 մ երկարություն, ուղղված է հյուսիսից հարավ (տախ. I, նկ. 2)։ Դամբարանում հայտնաբերվեց յոթ կմախք, տարբեր ձևերի կավամանների հետ միասին[1]։ Դամբարանի ուսումնասիրությամբ

---

[1] Հայտնաբերված նյութերի ուսումնասիրման ընթացքում օգտագործված է հետևյալ գրականությունը. А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, նույնի՝ Раскопки в Головино, Ереван, 1954; Է. Վ. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. III հազարամյակում, Երևան, 1967։ Նույնի՝ Գառնի 4, Պեղումների արդյունքները (1949—1966 թթ.), Երևան, 1969։ Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети,

պարզվեց նախնադարյան Հայաստանում գոյություն ունեցող թաղման շատ հետաքրքիր սովորություններից մեկը։ Նրա էությունը այն է, ննջեցյալների դիակները։ Ամեն անգամ հին կըմախքի ոսկորները խնամքով հավաքելուց և դամբարանի հյուսիսային պատի դիմաց կու-



Տախտակ I

որ միևնույն դամբարանում հաջորդաբար զետեղվել են նույն գերդաստանին պատկանող տակելուց հետո թաղել են հաջորդին։ Հաջորդաբար թաղված յոթ դիակներից նախավերջինի կմախքը ոչ թե նախորդների ոսկորների նման խառնիխուռն հավաքված էր պատի մոտ, այլ ամբողջական վիճակում դամբարանի լայնքով դրված էր նախորդ դիակների ոսկորների վրա՝ հյուսիսային պատի դիմաց։ Սա հնարավորություն է տալիս ենթադրելու, որ գերդաստանում վերջին մահացածի դիակը թաղելիս նախորդը դեռ քայքայված չի եղել։ Ննջեցյալների դիրքի

Тбилиси, 1941. Г. М. Асланов, Р. М. Вандов, Г. И. Ионе, Древний Мингечаур, Баку, 1959. С. А. Есаян, Оружие и военное дело в Армении, Ереван, 1966 Т. С. Хачатрян, Материальная культура древнего Артика, Ереван, 1963. Могильники Триалети, Каталог I, Тбилиси, 1968.

մասին մենք պատկերացում ենք կազմում յոթերորդ դիակի թաղման ձևից, որը դրված էր ձախ կողքի վրա ոտքերը կծկված վիճակում։ Պեղված դանգերը մեծ մասամբ լավ էին պահպանված և տրվել են մարդաբանական ուսումնասիրման։

Նույն ժամանակաշրջանի երկրորդ դամբարանը (հայտնաբերել է Քեթիի բնակիչ Ավետիք Զաքարյանը) գտնվում է առաջինից 10 մ հարավ. կիսավեր վիճակում։ Սա իր կառուցողական ձևով և պարունակած նյութերով հար և նման էր առաջինին։

Այս դամբարաններում հայտնաբերվել են գավաթներ, թասեր, կճուճներ։ Գավաթներն ունեն գլանաձև վիզ, թեթևակի դուրս ճկված շուրթ, ուռուցիկ իրան, նեղ տափակ հատակ։ Արտաքին և ներքին սև ու մոխրագույն մակերեսները փայլեցված են քարե կոկիչով։ Յուրաքանչյուրի ուսի վրա արված է մեկական հորիզոնական ակոս, բացի այդ, մի մասն էլ ունի մ. թ. ա. III հազարամյակի բնորոշ կանթեր (տախ. III, նկ. 1, 2)։ Այս տիպի գավաթները լայն տարածում են ունեցել Անդրկովկասի տերիտորիայի՝ մ. թ. ա. III հազարամյակի մշակույթում։ Նրանք հայտնաբերվել են Էլարում, Արագածի № 1 դամբարանում, Լենինականում, Գառնիում, Արևիկում, Բեշտաշենում և այլուր։ Բոլորն էլ թվագրված են մ. թ. ա. III հազարամյակի վերջին քառորդով։ Թասերը պատրաստված են ավազախառն կավից, ձեռքով, աստառը տարագույն (մոխրագույն, շագանակագույն, կարմրավուն), իսկ դրսի երեսները՝ մոխրագույն, սև կամ մուգ շագանակագույն, ունեն տարբեր մեծություն։ Շուրթերը դուրս ճկված են, իրանները ուռուցիկ, հատակները՝ փոքր և տափակ։ Իրանները զարդարված են փոքրիկ ելուստաձև կեղծ կանթերով և ներս ընկած փոսիկներով (տախ. III, նկ. 3, 4)։ Նման թասեր հայտնաբերվել են Էլարի դամբարաններից ու Արագածից, Բեշտաշենից և այլ վայրերից։

Կճուճները ևս պատրաստված են ավազախառն կավից, ունեն սև, փայլեցրած արտաքին մակերես, մոխրագույն աստառ, թրծված են անհավասարաչափ, որի պատճառով նրանց շուրթերը ավելի բաց գույն ունեն։ Այս կճուճները իրենց ձևերով նման են Կամոյում, Էլարում և Արագածում գտնվածներին, բայց տարբերվում են դծանախշերի բացակայությամբ (տախ. III, նկ. 5, 6)։ Բեշտաշենի, Մինգեչաուրի նույնանման ամաններն ունեն ավելի բարձր վիզ։ Մեր նմուշների վրա եղած ունկերը միջանցիկ անցքեր չունեն և տեղադրված են իրանի ուսերին, իսկ վերը բերվածների կանթերը տեղավորված են ամանների վզերի վրա և անցքեր ունեն։ Համեմատությունների նպատակով վերը բերված բոլոր նյութերը հեղինակների կողմից թվագրված են մ. թ. ա. III հազարամյակի վերջին քառորդով։

Այսպիսով տեսնում ենք, որ Քեթիի մ. թ. ա. III հազարամյակի դամբարաններից հայտնաբերված կավամանները իրենց զուգահեռներն ունեն Հայաստանի տերիտորիայի վաղ բրոնզեդարյան մշակույթի վերջին փուլում։ Նրանց վրա չկան ռելեֆ և ներճկված պարուրաձև զարդեր ու կիսագնդաձև կանթեր, որոնք այնքան բնորոշ են էջմիածնի Քյուլ-Թափային, Շենգավթին, Շրեշ-բլուրին, Նախիջևանի Քյուլ-թափային և վաղ բրոնզի առաջին փուլի այլ հուշարձաններին։ Վերը կատարված համադրություններից ելնելով կարող ենք ներկայացրած նյութերը թվագրել մ. թ. ա. III հազարամյակի վերջին քառորդով։

Նշված կիկլոպյան ամրոցից հարավ գտնվող դամբարանադաշտում 1970 թ. մեր կողմից պեղվեցին հինգ դամբարաններ, որոնք պատկանում են կրոմլեխների տիպին։ Գետնի մակերեսին նրանք ներկայանում են կլոր անմշակ որձաքարերի մի շարքով երիզված շրջաններով, որոնց ներսը լցված է տարբեր մեծության քարերով։ Որոշ դամբարանների վրայի քարե շրջանները և քարակույտերը հազարամյակների ընթացքում քայքայվել են և այժմ կիսով չափ երևում են դամբարանի ծածկի քարերը։ Դամբարանները հիմնահողային են և ծածկված են բավական մեծ սալ քարերով, որոնք միմյանց վրա հաջորդաբար դրվելով ծածկում են փոսը (տախ. I, նկ. 4)։ № 2 դամբարանը կարելի է համարել կիսաքարարկղային, որովհետև նրա ճակատային՝ հյուսիսային և հարավային պատերը շարված են քարերով, իսկ մյուսները հողից են (տախ. I, նկ. 1)։ Բեև պեղված բոլոր հինգ դամբարանները չափերով միմյանցից տարբերվում են, բայց բոլորն էլ ունեն անկանոն քառանկյունու ձև։

Սրանցից առավել հետաքրքիր է № 1-ը (տախ. I, նկ. 4), որը գտնվում է ձորի եզրի թմբից 100 մ հյուսիս և մյուսներից տարբերվում է իր մեծությամբ և իրերի պարունակությամբ։ Քարե շրջանի տրամագիծը 9,5 մ է։ Դամբարանի ծածկի քարերը հեռացնելուց հետո պարզվեց, որ նրա պատերը հողից են, ունի քառանկյունու ձև և հետևյալ չափսերը՝ երկարությունը՝ 4 մ, խորությունը՝ 2,5 մ, լայնությունը՝ 2,5 մ։ Դամբարանը ծածկող չորս սալ քարերը հետևյալ չափսերի են՝ 4,1×2 մ, 2,6×1 մ, 2,7×0,9 մ, 2,9×1,4 մ։ Դամբարանում հայտնաբերվեցին երկանիվ կառքի մընացորդներ, որոնք դրված էին հարավային պատի ոիմաց։ Կառքի վրա պահպանված անիվնե-

ոի միջև եղած հեռավորությունը 1,4 մ է, անիվների բարձրությունը՝ 1 մ, որոնք պատրաստված են երեք կտոր փայտից և ունեն 20 սմ տրամագծով միջանցիկ անցք։ Կառքից բացի դամբարանի հյուսիսային պատի մոտ հայտնաբերվեց ձիու կմախք։ Հետաքրքիր է նշել, որ փոսը ոչ ճիշտ քառանկյունաձև է, երկարությունն է 1,12 մ, լայնությունը՝ 1,5 մ, խորությունը՝ 1,3 մ։ Ննջեցյալը թաղված էր աջ կողքի վրա, կծկված վիճակում։ Ծոծրակի մոտ դրված էր կարասիկ, իսկ մեջքի ոսկորների մոտ՝ երկու թաս, գոտկատեղին՝ բրոնզե դաշույն, ոտ-



Տախտակ II

ձիու կրծոսկրների տակ բացվեցին շատ մատղաշ ձիու կմախքի մնացորդները։ Ննջեցյալը փաթաթված էր խսիրով, որի վրա կարմիր օխրայի հետքեր կային։ Ելնելով դամբարանափոսում ոսկորների դասավորությունից, կարելի է ենթադրել, որ դիակը թաղվել է կառքի վրա նստած։ Հանգուցյալի հետ թաղված էր նաև մանր եղջերավոր կենդանի, որի վրա դրված էր վանակատի ցլեպ։ Հյուսիսային և Հարավային պատերի անկյունամասում դրված էին վեց կավամաններ, որոնցից երեքի մեջ նույնպես կային վանակատի բեկորներ։

№ 2 դամբարանը գտնվում է առաջինից հարավ։ Դամբարանափոսը անկանոն քառանկյունի է, որի երկու պատերը շարված են, երկուսը՝ ոչ։ Դամբարանի երկարությունն է 4,2 մ, լայնությունը՝ 1,6 մ, խորությունը՝ 2 մ (տախ. I, նկ. 1)։ Դամբարանում կմախքի մնացորդներ չհայտնաբերվեցին։ Ի տարբերություն առաջինի, այս դամբարանի կավամանները կոտրված էին։

№ 3 դամբարանը գտնվում է առաջինից 100 մ հյուսիս։ Ե՛վ արտաքին, և՛ ներքին հատկանիշներով նման է առաջինին։ Դամբարանաքի ոլորքի վրա՝ բրոնզե կիսագնդաձև հորիզոնական կամրջակով կոճակ, կրծքի մոտ՝ խրխունջե զարդ։

№ 4 դամբարանը գտնվում է երրորդից 10 մ հյուսիս։ Սրա և նախորդի միջև եղած տարբերությունը չափերի մեջ է. երկարությունն է 1,95 մ, լայնությունը՝ 1,12 մ, խորությունը 1,1 մ է։ Դամբարանը հողից մաքրելիս 10 սմ խորության վրա հայտնաբերվեց մեկ հասարակ կավաման հանգուցյալի ոսկորների մի մասի հետ, իսկ հատակին, 1,1 խորության վրա, հյուսիսային պատի մոտ գտնվեց գանգը, կավամանների բեկորների հետ։ Վերը նշված բոլոր չորս դամբարանները իրենց ձևերով ուղղակի համադրվում են Հայաստանի տերիտորիայի այլ հնավայրերի մ. թ. ա. XII—X դարերով թվագրվող դամբարանների հետ։

Ինչպես տեսանք, վերը նկարագրված ուշ բրոնզեդարյան դամբարանները աչքի չեն ընկնում իրենց պարունակած նյութերի հարստությամբ և բազմազանությամբ։ Սակայն եղածներն էլ որոշակիորեն օգնում են պարզաբանելու Շիրակի նախաբնիկների թաղման ձևերը և ծիսական որոշ սովորությունները։

Ուշ բրոնզի դարաշրջանի դամբարաններից հայտնաբերված նյութական մշակույթի նմուշները կարելի է խմբավորել հետևյալ տեսակների մեջ՝ վանակատի ցլեպներ, բրոնզե իրեր, կավամաններ և խխունջից զարդ։

Վանակատի ցլեպները չորսն են, հայտնաբերվել են № 1 դամբարանից (տախ. II, նկ. 1—4)։ Միջուկից պոկելուց հետո սրանք չեն ենթարկվել լրացուցիչ մշակման, այլ որպես սուր իրեր դրվել են ննջեցյալի հետ։ Այդ բոլոր գործիքների ծիսական իմաստը նույնն է՝ մսի օգտագործումը «հանդերձյալ աշխարհում»։

Բրոնզե դաշույնի երկարությունն է 34 սմ, դաստակի երկարությունը՝ 12 սմ։ Սեղրի երկու երեսներին արված են հնդական խոր ակոսներ։ Դաշույնը միաձույլ է, նրա դաստակը փայտից է եղել, որի մնացորդները պահպանվել են։ Այս դաշույնը պատկանում է Հայաստանում հայտնաբերված հայտնի որնակյան տիպին, որ թվագրվում է XII—XI դարերով։ Նման դաշույններ հայտնաբերվել են Կիրովականի «Դիմաց» թաղամասում, Արթիկում և այլ հուշարձաններում։ Բրոնզե մյուս իրը կիսագնդաձև կոճակն է հորիզոնական կամրջակով։ Նման կոճակներ գտնվել են Ստեփանավանում և Արթիկում։

Կարասները պատրաստված են դուրդի վրա, բավական մեծ վարպետությամբ (տախ. III, նկ. 7—12)։ Ունեն մոխրագույն աստառ, սև փայլեցված արտաքին մակերես, նեղ բերան, դեպի դուրս ճկված շուրթեր, ցածր վիզ, փքուն իրան, հարթ հատակ։ Վզից ներքև ուսերի վրա փայլեցման եղանակով արված են թեք գծերից ճառագայթներ և հորիզոնական խորակոս զարդանախշեր։ Նման կարասներ հայտնաբերվել են Արթիկի դամբարաններում, Հոռոմում, Լենինականում, Գառնիում, Թրիալեթիում (Ծալկայի շրջան) և Թբիլիսիում, Բեշտաշեն—Սաֆար—Խարաբայում (Ցինծդարո)։ Թասերը պատրաստված են լավ մշակված կավից, դուրդի վրա։ Ունեն սև և մոխրագույն աստառ, սև փայլեցված և վարդագույն արտաքին մակերես, դուրս կամ ներս ճկված, երբեմն էլ ուղղահայաց շուրթեր (տախ. III, նկ. 13—18)։ Նման թասեր հայտնաբերվել են Անդրկովկասի տերիտորիայի՝ համաժամանակյա համարյա բոլոր դամբարաններում։

Այսպիսով, վերը նկարագրված ուշ բրոնզեդարյան դամբարաններում հայտնաբերված հրնագիտական նյութերը և նրանց համադրությունները հնարավորություն են տալիս 1970 թ. Քեթիում պեղված №№ 1—4 դամբարանները թվագրել մ. թ. ա. XII—X դարերով։

№ 5 դամբարանը գտնվում է չորրորդից 10 մ արևելք։ Այս դամբարանը շատ հետաքրքիր նյութեր տվեց, որոնք պատկանում են մ. թ. ա. VII—VI դարերի մշակույթին։ Դամբարանը քառանկյունաձև է, բայց ի տարբերություն նախորդների այս դամբարանի հիմնահողային պատերի վրա կային միայն ծածկի քարեր (տախ. I, նկ. 3)։ Դամբարանը մաքրելիս 70 սմ խորության վրա հայտնաբերվեց երկու թաղում. մեկը՝ հարավ-արևմտյան անկյունում, մյուսը՝ հյուսիսային պատի դիմաց։ Կենտրոնում դրված էին յոթ կավամաններ, երկաթե ու բրոնզե դանակներ և բրոնզե կիսագնդաձև զարդ (տախ. III, նկ. 19—28)։ Դամբարանի հատակին բացվեց մեկ այլ կմախք (առաջին թաղումը), որի հետ չկար ոչ մի իր, այդ իսկ պատճառով հնարավոր չէ որոշել նրա թաղման ժամանակաշրջանը։ Երկաթե դանակն ունի 20 սմ երկարություն և հաստ մեջք։ Նման դանակներ հայտնաբերվել են Գոլովինոյի № 1 կրոմլեխում և Թրիալեթիի (Ցինծդարո) դամբարաններում։

Բրոնզե դանակ — կեռ ծայրով, նեղ, սուր պոչով։ Դանակի շեղրի վրա կան երկու փոքր կլոր անցքեր։ Վերջին հանգամանքը ցույց է տալիս, որ այն եղել է այլ գործիքի դաստակ, որի մաշվելուց կամ կոտրվելուց հետո վերածվել է փոքրիկ դանակի։ Հետաքրքիր է նկատել, որ մ. թ. ա. VII—VI դարերի նյութական մշակույթում նման ձևի դանակներ մեզ հայտնի չեն։ Նրանք առավել տարածված են ուշ բրոնզի դարաշրջանում։

Բրոնզե շատ բարակ, կիսագնդաձև զարդ, վրան արված փոքրիկ բշտիկներ։

Այս դամբարանի կավամանները թվով յոթն են և բոլորն էլ տարբեր տեսակի։

Կարասիկ — մոխրագույն աստառով, բաց վարդագույն արտաքին մակերեսով, նեղ բերանով, դուրս ճկված շուրթով, ցածր վզով, որը ուսերից անջատվում է հորիզոնական խորակոս գծով։ Ամանի վիզը նույնպես զարդարված է հորիզոնական ակոսներով։ Ուսերի վրա բացի հորիզոնական խորակոս նախշերից, արված են նաև փայլեցման եղանակով սև գծանախշեր։ Կարասիկի իրանը ուռուցիկ է, իսկ հատակը՝ փոքր և հարթ (տախ. III, նկ. 22)։ Նման կարասիկներ գտնվել են Թրիալեթիի (Ցինծդարո) դամբարաններում։

Սափոր — ունի նեղ բերան, դուրս ճկված շուրթ և ցածր վիզ։ Ուսերի վրա ձեռքով արված են երկու անհավասարաչափ հորիզոնական գծանախշեր։ Իրանը ուռուցիկ է, որի երկու հակադիր մասերում կա մեկական կանթ։ Հատակը փոքր է և տափակ (տախ. III, նկ. 23)։ Նման ամաններ հայտնաբերվել են 1952 թ. Լենինականի մսի կոմբինատի մոտի դամբարաններում։ Սրանք ունեն հորիզոնական խորակոս և ալիքաձև նախշեր։ Կավամանների այս ձևը

շատ է տարածված Թրիալեթիում՝ Բեշտաշենի դամբարաններում։

Կուժ — մոխրագույն, նեղ բերանով, դուրս ճկված շուրթով։ Ունի մեկ աղեղնաձև կանթ։ Ուսերի վրա արված են երեք շարք հորիզոնական, թույլ ներճկված նախշեր, իսկ դրանց արանքում երկու շարք հորիզոնական ալիքաձև նախշեր։ Իրանը ուռուցիկ է, հատակը՝ փոքր և տափակ (տախ. III, նկ. 24)։ Նման սափորներ գտնվել են Լենինականի մսի կոմբինատի մոտից և Խրտանոցից։ Այս սափորները, բացի ներճկված հորիզոնական նախշերից, ունեն նաև փայլանախշեր։

Սկահակ — սև աստառով, սև փայլեցված արտաքինով, թեթևակի ներս հակված շուրթով.



Տախտակ III

փոքր, ոչ բարձր նստուկով։ Ուսերը զարդարված են եռանկյունաձև նախշերով, որոնք կազմված են կետանման փոսիկներից, իսկ փորի վրա արված են հորիզոնական գծանախշեր։ Կիսակլոր կանթի վրա, արտաքին կողմից արված է ակոսաձև փոսիկ (տախ. III, նկ. 25)։ Նման սկահակներ հայտնաբերվել են Խրտանոցից, ո-

րոնց ունկերը քառակուսի ելուստաձև են, Գոլովինոյի № 1 կրոմլեխից (2 հատ), քառակուսի ելուստաձև ունկով և ավելի փոքր նստուկով, Լենինականից (մսի կոմբինատի մոտից), ելուստաձև կանթերով և այլն։

Գավաթ—մոխրագույն, թեթևակի ներս հակված շուրթով, որից ներքև ունի երկու լայնակոս հորիզոնական նախշեր։ Իրանի վրա առկա է մեկ կիսակլոր կանթ, հատակը տափակ է ու մրոտված (տախ. III, նկ. 26)։ Այս գավաթը իր զուգահեռներն ունի Խրտանոցում, Գոլովինոյում, Թրիալեթիում և այլուր։

Կճուճ—սև գույնի, դուրս ճկված շուրթով, ցածր վզով, տափակ հատակով և ուռուցիկ իրանով։ Ուսերը զարդարված են հատիկաձև նախշերով։ Կրակի վրա երկար օգտագործելուց ամանի արտաքին մակերեսը սևացած է։ Նույնատիպ ամանները լայն տարածված են Հայաստանի և Վրաստանի տերիտորիաների համաժամանակյա հուշարձաններում և բոլորն էլ թվագրվում են մ. թ. ա. VII—VI դարերով (տախ. III, նկ. 27)։

Բաս—մոխրագույն, ուղղահայաց շուրթով, տափակ ու լայն նստուկով, որը մրոտված է։ Շուրթից ներքև ունի երեք լայնական հորիզոնական ռելեֆ նախշեր (տախ. III, նկ. 28)։ Նման թասեր հայտնաբերվել են Թրիալեթիի (Ցինծդարո) և Բեշտաշենի դամբարաններում, որոնք բոլորն էլ թվագրվում են մ. թ. ա. VII—VI դարերով։

Այսպիսով, առայժմ պարզվում է, որ կիկլոպյան ամրոցում կյանքը հարատևել է մ. թ. ա. XII—VI դարերում, բայց բացառված չէ նաև այն հանգամանքը, որ հետագա պեղումների շնորհիվ հուշարձանի ժամանակագրական սահմանները կարող են ընդարձակվել։

1970 թ. Քեթի գյուղի շրջակայքի նախնադարյան հուշարձանների տարածքից հավաքված և պեղված նյութական մշակույթի մնացորդները հնարավորություն են տալիս մտածելու, որ ինչպես Հայկական Լեռնաշխարհի բարբեր այլ հովիտները, այնպես էլ Շիրակի դաշտը, սկսած մ. թ. ա. III հազարամյակից զբաղեցված է եղել երկրագործական և անասնապահական տնտեսություն վարող բնակչությամբ, որի նյութական արտադրության և հասարակական կյանքի հուշարձանները, իրենց տեղական ներքին ինքնատիպությամբ հանդերձ, բազմաթիվ ընդհանրություններ ունեն Հայկական Լեռնաշխարհի այլ հնավայրերից հայտնի նախնադարյան մշակույթի նմուշների հետ։ Քեթիի հնավայրերից հայտնաբերված հնագիտական նյութերի ուսումնասիրությամբ էլ ավելի ակներև է դառնում այդ նախնադարյան մշակույթի միասնականությունը և մի անգամ ևս հաստատվում է, որ Շիրակի դաշտը եղել է այդ մշակույթի կարևոր օջախներից մեկը։

Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

О ЦИКЛОПИЧЕСКИХ КРЕПОСТЯХ ИДЖЕВАНА И НОЕМБЕРЯНА

Иджеванский и Ноемберянский районы Армянской ССР являются малоизученными в археологическом отношении районами, хотя имеется значительное количество циклопических крепостей, могильников и поселений. В последние годы начались разведочные раскопки и изучение циклопических крепостей. В настоящей статье авторы рассматривают двадцать циклопических крепостей, которые обобщают обнаруженные до настоящего времени сооружения этого типа в указанных районах[1].

1. Крепости Иджеванского района[2].

Крепость Астхи-блур находится на северо-восточной окраине села Енокаван, на скалистом холме округлой формы, склоны которого крутые, местами резко обрывистые. Лишь северная сторона покато примыкает к плато, на котором находится обширный могильник, датируемый началом и серединой I тыс. до н. э.

Крепость, территорией 2 га, повторяя конфигурацию холма, имеет овальную форму. Она обнесена двухрядной стеной шириной 3 м, выложенной из крупных известковых плит, высота которых местами сохранилась до трех метров. Стены не имеют башен или контрфорсов, но местами образуют углы и изломы.

---

[1] Семь крепостей Ноемберянского района, обнаруженных ранее, изданы нами в 1972 г. (см. «О некоторых циклопических крепостях Ноемберяна», «Историко-филологический журнал», 1972, № 1, стр. 269).

[2] Крепости Иджеванского района обмерены Г. Кочояном глазомерной съемкой с применением компаса, крепости Ноемберянского района обмерены А. Кочаряном и С. Аланикяном.